Doi: 10.56737/2953-7843-2025.04-39

Տ. ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մատենադարանի եւ հրատարակչության տնօրեն

Տ. Տ. ԳԵՈՐԳ Ե. ՍՈՒՐԵՆՅԱՆՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԸ ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ[1]

Հայ Եկեղեցու՝ առաքելահաստատ հոգեւոր կառույցի դավանաբանական եւ ծիսա-արարողական համակարգերը 1700-ամյա պատմության ընթացքում զարգացել են, մշակվել, որոշակիորեն փոփոխվել։ Քրիստոնեության ընդունումից հետո հայ ժողովուրդն անկոտրում պայքարել է հանուն իր հավատքի եւ հայրենիքի՝ հաղթահարելով բազում դժվարություններ։ Հայ Եկեղեցին ինչպես անցյալում, այնպես եւ այժմ նշանակալի դեր ունի հայ ժողովրդի կյանքում։ Պետականության բացակայության պայմաններում Հայ Եկեղեցին ստանձնել է նաեւ հայ ժողովրդին առաջնորդելու եւ ղեկավարելու պետական գործառույթները։

Քրիստոնեության՝ պետական կրոն հռչակումից հետո Ս. Գրիգոր Լուսավորչի (302–325 թթ.) ջանքերով կարճ ժամանակամիջոցում ստեղծվում է եկեղեցական նվիրապետական (վարչական) կառույցը[2], եւ թագավորը Հայոց Եկեղեցուն պատվիրակում է հասարակական-պետական մի շարք բնագավառների կառավարումը։ Դրանք են՝ կրթություն, դատական իշխանություն, կանոնադիր (օրենսդիր) իշխանություն, ընկերային (սոցիալական) ապահովություն, արտաքին քաղաքականություն։

Հայոց Եկեղեցին, ի շարս վերը թվարկված գործառույթների, ունեցել է նաեւ կանոնադիր (օրինաստեղծ) գործառույթ, որը հիմնականում իրականացրել է եկեղեցական ժողովների միջոցով։ Ժողովների ընդունած իրավական դրույթները՝ կանոնները, վերաբերել են ինչպես եկեղեցական, այնպես եւ հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներին։ Ի դեպ, հայ իրականության մեջ եկեղեցական ժողովներին մասնակցել են նաեւ աշխարհիկ իշխանության ներկայացուցիչները՝ հաճախ

---

[1]* *Ստացվել է՝ 22.05.2025, գրախոսվել է՝ 22.06.2025։ Էլ. հասցե՝* terararatqahana@gmail.com:

[2] *Տե՛ս* ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, *Հայոց պատմություն, Երեւան, 1983, էջ 477. հմմտ.* ՈՒԽՏԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, *Պատմութիւն, Վաղարշապատ, 1871, էջ 100։*

հանդես գալով որպես ընդունված իրավական դրույթների գործադրման երաշխավորներ։ Այս առումով չափազանց պերճախոս է Շահապիվանի 444 թ. եկեղեցական ժողովի արձանագրությունը, որի համաձայն՝ ժողովին մասնակցել են երկրի բոլոր իշխանները, որոնք, դիմելով մյուս ժողովականներին, ասել են. «Սուրբ Գրիգորի, Ներսեսի, Սահակի եւ Մաշտոցի սահմանած կարգը դուք վերստին հաստատեք ու նաեւ այլ լավ (կարգեր)՝ ձեր կամքով, եւ մենք մեր կամքով ու հավանությամբ հանձն ենք առնում»[3]։ Եկեղեցական ժողովների ընդունած կանոնները պարտադիր են եղել ինչպես հոգեւորականների, այնպես եւ աշխարհականների, այդ թվում՝ իշխանավորների համար։ Այդ է վկայում Փավստոս Բուզանդը 354 թ. Աշտիշատի ժողովի վերաբերյալ. «Եւ բոլոր աշխարհին պատվիրում էր նա (Ս. Ներսես Ա. Մեծը.– Ա. բհն. Պ.)՝ նույն ինքն թագավորին, մեծամեծներին եւ առհասարակ նրանց, որոնք ուրիշի վրա իշխանություն ունեին, որ գութ ունենան իրենց ծառաների, ստորադրյալների եւ աշակերտների վրա....»[4]։

Հայ Եկեղեցին՝ իբրեւ կենդանի կառույց, անցել է զարգացման իր ուրույն ճանապարհը։ Այն որոշակիորեն տարբերվում է մյուս Եկեղեցիներից, քանզի իր վարչական կառուցվածքում մշտապես ներառել եւ այժմ էլ ընդգրկում է թե՛ հոգեւորականների, թե՛ աշխարհականների։

Հայ Եկեղեցու հարաբերություններն այլ Եկեղեցիների հետ, ներքին կյանքը, եկեղեցի–հավատացյալ շփումն ինչպես անցյալում, այնպես եւ այսօր կարգավորվում են ոչ միայն ըստ Հայ Եկեղեցում գումարված ժողովների կանոնների եւ որոշումների, այլ նաեւ կաթողիկոսական կանոնական կոնդակների եւ շրջաբերականների՝ ժամանակի ընթացքում նվիրագործված ավանդույթների հիմամբ։

Նշենք, որ, բարեբախտաբար, պահպանվել ու մեզ են հասել ԺԹ.–ԻԱ. դարերի ընթացքում Ամենայն Հայոց կաթողիկոսների ստորագրած կանոնական որոշումներն ու կարգադրությունները, ինչպես նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ առհասարակ Հայ Եկեղեցուն վերաբերող կառավարչական եւ օրենսդրական բազմաթիվ փաստաթղթեր (կոնդակ, շրջաբերական, տնօրինություն, կարգադրություն, որոշում եւ այլն),

---

[3] *Հմմտ. «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., Երեւան, 1964, էջ 438։*

[4] Փավստոս Բուզանդ, *Հայոց պատմություն, թարգմ. եւ ծան.՝ Ստ. Մալխասյանցի, Երեւան, 1987, էջ 121։*

որոնք այսօր եւս Հայոց հայրապետների հաջորդաբար կատարած բարեփոխումների արդիւնքն են եւ ունեն իրաւականոնական ուժ։

Այս շարակարգում առանձին ուսումնասիրության եւ հստակեցման են կարոտ ազգակցական կապի հիմնախնդրին ու դրան ուղղակի կամ անուղղակի առնչվող՝ ամուսնացողների տարիքի (չափահասության), ազգակցական-արյունակցական կապի հաշվարկման մեկ միասնական սկզբունքի որդեգրման, ամուսնալուծության թույլատրելիությանը վերաբերող միջնադարյան կանոնների վերանայման ու արդիականացման եւ հարակից այլ հարցերը։

Հաշվի առնելով վերջին տարիներին հավատացյալներին ամենաշատը հուզող հարցերից մեկը, այն է՝ զույգի միջեւ ազգակցական կապի որ աստիճանում է թույլատրելի պսակը, անհրաժեշտ ենք համարում Հայոց երջանկահիշատակ հայրապետ Գեւորգ Ե. Սուրենյանցի (1911–1930 թթ.)՝ առկա խնդրին վերաբերող կոնդակի բնագիրն առաջին անգամ ամբողջապես հրապարակելը։ Այս փաստաթղթի հրապարակումը թե՛ ժամանակին եւ թե՛ այսօր խիստ կարեւոր է պատմական իրականության բնութագրման ու Եկեղեցու իրավունքների ճշգրտման եւ պահպանման առումով։ Փաստաթղթի բովանդակությունը Հայ Եկեղեցու պատմության մի մասն է, նրա՝ տարբեր ժամանակաշրջանների գործունեությունն արտացոլող վկայությունը։

Ամուսնության, խնամիության, ազգակցական (արյունակցական) կապի եւ աստիճանի մանրամասն քննությամբ արժեքավոր է Կ. Պոլսի Հայոց պատրիարք Հակոբ Նալյանի աշխատությունը, որում հեղինակը, տարբեր հարցադրումների միջոցով անդրադառնալով Պսակի խորհրդին, առանձին գլուխներով վերլուծում է նաեւ վերը նշված խնդիրները[5]։ Ազգակցական կապի հիմնահարցը գրեթե միշտ եղել է մասնագետների ուշադրության կենտրոնում։ ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին մի շարք ուսումնասիրողներ համակողմանիորեն անդրադարձել են այս խնդրին։ Օրինակ՝ Վահան վրդ. Բաստամյանցն իր կանոնագիտական աշխատություններում, հատկապես՝ «Ամուսնութիւնն ըստ Հայոց իրաւաբանութեան» երկում քննարկել, մեկնաբանել է սույն հիմնահարցը. նա

---

[5] *Տե՛ս* Յ Ա Կ Ո Բ Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Ն Ա Լ Է Ա Ն, *Կրթութիւն աստուածաբանական զխորհրդոցն Եկեղեցւոյ, ներածութիւնը, քննական բնագիրն ու ծանօթ.՝ Յ. Քէօսէեանի, Ս. Էջմիածին, 2024, էջ 880–891։*

օգտագործել է ամուսնությանը վերաբերող՝ մինչ այդ հրատարակված հայագիտական գրեթե բոլոր աղբյուրները։ Նշյալ ուսումնասիրության մեջ հեղինակն առանձին բաժին է հատկացրել մերձավոր ազգականների չհասության խնդրի պարզաբանմանը՝ ցույց տալով միեւնույն ընտանիքի անդամների ամուսնության, ըստ կենսաբանների, վտանգավորությունն ու վնասակարությունը[6]*։ Հենց Վահան վրդ. Բաստամյանցն է հայագիտության մեջ առաջին անգամ առանձնացնում եւ սահմանում ճյուղագրություն, ազգակցություն (*cognatio-agnatio*), արյունակցություն (*consaguinitas*), խնամություն (*affinitas*) եզրույթները, տարբերակում մարմնական ազգակցությունը հոգեւորից (կնքահայրություն), բարոյականից (եղբայրակցություն), իրավաբանականից (որդեգրություն)։ Հեղինակն առանձնացնում է ամուսնական չհասության հինգ ձեւ՝ 1. արյունակցական, 2. խնամիական, 3. կնքահայրական, 4. որդեգրական եւ 5. եղբայրակցական։ Սահմանելով արյունակցություն (*consanguinitas*) եզրույթը՝ Վահան վրդ. Բաստամյանցն ստեղծում է նշանային համակարգ, որն այնուհետեւ կիրառում է ճյուղագրության մեջ ազգակցական աստիճանը (*gradus cognationis*) գտնելու համար*[7]*։*

Քննարկվող նյութի վերաբերյալ մեզ են հասել բազմաթիվ կանոններ[8]*, որոնք պատմական տարբեր շրջափուլերում հասարակության մեջ կարգավորել են ամուսնացող զույգի ազգակցական կապի խնդիրը։ Այդ կանոնները եղել են պարտադիր, իսկ խախտողների համար սահմանվել են խստագույն պատիժներ։ Նշենք, որ եղել են նաեւ դեպքեր, երբ եկեղեցական բարձրագույն իշխանությունը, ելնելով ստեղծված իրավիճակից, թույլատրել է ազգակցական կապի՝ այդ օրերում սահմանված եւ գործող աստիճանից շեղվել։ Օրինակ՝ Ա. Տեր-Միքելյանն իր «Պսակի Ս. Խորհուրդը» աշխատության մեջ ուսումնասիրում է քննարկվող խնդիրը՝ հարակից հարցերով հանդերձ*[9]*։ Հեղինակը, նշյալ ուսումնասիրության*[10] *մեջ անդրա-*

---

[6] *Այս մասին մանրամասն տե՛ս* Վահան Վարդապետ Բաստամեանց, *Կանոնագիտական երկեր, աշխատ.՝ Ա. Բոզոյանի, խմբ.՝ Շահե վրդ. Անանյան, Ս. Էջմիածին, 2015, էջ 336–413։*

[7] *Տե՛ս* Վահան Վարդապետ Բաստամեանց, *Կանոնագիտական երկեր, Ս. Էջմիածին, 2015, էջ 45։*

[8] *Տե՛ս «Համաբարբառ Կանոնագիրք Հայոց», կազմ.՝ Արամ Մարտիրոսեան, խմբ.՝ Շահէ ծ. վրդ. Անանեան, Ս. Էջմիածին, 2020, էջ 698–712։*

[9] *Տե՛ս* Ա. Տէր-Միքէլեան, *Պսակի Ս. Խորհուրդը, Վաղարշապատ, 1894, էջ 94–146։*

[10] *Նույն հեղինակն այս խնդրին համառոտ անդրադառնում է նաեւ իր մեկ այլ ուսումնասիրության մեջ. տե՛ս* Ա. Տեր-Միքելյան, *Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու քրիստոնեականը,*

դառնալով ԺԹ. դարում եկեղեցական բարձրագույն իշխանության՝ որոշակի հանգամանքներին տեղի տալու եւ ազգակցական կապի ընդունված աստիճանից շեղվելու թույլտվությանը, գրում է. «Այս արդէն շատերից մի օրինակ է, թէ ինչպէս էին վարւում Հայոց կաթուղիկոսք, երբ հանգամանքների այնպիսի վիճակում էին գտնւում ամուսնացողներն, որ անհրաժեշտ էր լինում ներողամտաբար ուղղելու հնարների դիմել։ Վերջին կաթուղիկոսները նման դէպքերում գործ էին ածում «ոչ յօրինակ այլոց» խօսքերը, սակայն բաղձալի է, որ յիշուին թէ՛ այդպէս ներողամիտ լինելու պատճառներն եւ թէ՛ կանոնազանցութեան թեթեւացուցիչ աշխատանքներն, որոնցով կարողանում են սիրայոյզ ամուսիններն ամոքուել, խոյս տալ վերջնական կորստից, զղջալ եւ պատուիրանապահութեամբ բարեկեցիկ լինել Հայոց Եկեղեցու աստուածային շնորհների տակ»[11]։

Մեզ հետաքրքրող խնդրին համակողմանիորեն անդրադարձած հաջորդ հեղինակը Ներսես վրդ. Մելիք-Թանգյանն է։ Նա, ուսումնասիրելով սկզբնաղբյուրները եւ ժամանակի եկեղեցականոնագիտական նյութերը, իր «Հայոց եկեղեցական իրաւունքը» հիմնարար աշխատության մեջ առանձին հատված է նվիրում Հայոց մեջ եկեղեցական դատին ու դատավարությանը։ Այս հատվածներում, հատկապես՝ «Պսակի մասին» բաժնում[12], պատմական ակնարկով ներկայացնում է եկեղեցական պսակը, անդրադառնում հասության եւ չհասության խնդրին, նշանադրության եւ պսակադրության կարգին, ազգակցության՝ Հայոց Եկեղեցու համար ընդունելի աստիճաններին եւ ազգակիցների միջեւ ամուսնության թույլտվության կարգին, խնամիական աստիճաններին, ամուսնալուծության կարգին՝ հատուկ անդրադառնալով Հակոբ Ղրիմեցու՝ պսակի կանոններին[13]։ Ավելի ուշ՝ Հայ Եկեղեցու խորհուրդներին նվիրված իր գրքույկում Ս. Պսակի խորհուրդը ներկայացնելիս, ի շարս այլ հարցերի՝ ամփոփ անդրադառնում է նաեւ ազգակցական աստիճաններին ու դրանց հաշվարկի խնդրին[14]։

Ս. Էջմիածին, 2007, էջ 463–464։

[11] Ա. Տէր-Միքէլեան, *Պսակի Ս. Խորհուրդը, Վաղարշապատ, 1894, էջ 145–146։*

[12] *Մանրամասն տե՛ս* Ներսէս վրդ. Մելիք-Թանգեան, *Հայոց եկեղեցական իրաւունքը, առաջաբանը եւ ծանօթ.՝ Ա. Բօզոյեանի, Ս. Էջմիածին, 2011, էջ 801–833։*

[13] *Տե՛ս* Ներսէս վրդ. Մելիք-Թանգեան, *Հայոց եկեղեցական իրաւունքը, Ս. Էջմիածին, 2011, էջ 13։*

[14] *Տե՛ս* Դերենիկ եպս. [Փոլատեան], *Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ խորհուրդները, Պէյրութ, 1957, էջ 90–93։*

Ազգակցական աստիճանների հարցը քննարկելիս անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել հոգեւոր ազգակցության աստիճանակարգմանը: Վերջինս նաեւ անուղղակի կապ ունի ու կարեւոր է մասնավորապես կնքահոր եւ սանիկի, կնքահոր ու սանիկի հարազատների միջեւ ամուսնությանը վերաբերող կանոնների ուսումնասիրման տեսանկյունից: Այս խնդիրը եւս հայտնվել է որոշ ուսումնասիրողների ուշադրության ծիրում: Օրինակ՝ Տ. Զաքարիա վրդ. Բաղումյանը, իր «200 հարց Ս. Մկրտության մասին»՝ հարց ու պատասխանի ձեւով շարադրված գրքում անդրադառնալով կնքահոր եւ սանիկի ամուսնության թույլատրելի լինել-չլինելու վերաբերյալ կանոնական որոշումներին, այդ թվում՝ 2014 թ. Ս. Էջմիածնի եպիսկոպոսաց ժողովի՝ կնքահոր եւ սանիկի միջեւ ամուսնության արգելքի, կնքահոր ու սանիկի հարազատների միջեւ ամուսնության՝ ազգակցության 3-րդ աստիճանի թույլտվությանը, եզրակացնում է. «....քանի դեռ հայրապետական նոր կոնդակ չկա այս մասին, կանոնական առումով դեռեւս ուժի մեջ է Խրիմյան Հայրիկի սահմանած հոգեւոր ազգակցության 6 պորտը»[15]: Սույն խնդիրը քննարկել է նաեւ Ա. Զանթիկյանը «Ամուսնության որոշ արգելքների շուրջ» հոդվածաշարում, որտեղ հեղինակը, ուսումնասիրելով համապատասխան գրականությունը, ամփոփում է. «Այսպիսով, բացի Հակոբ վրդ. Ղրիմեցու աշխատասիրությունից եւ Ներսես վրդ. Մելիք-Թանգյանի որոշակի անդրադարձից, այլ աղբյուրներում առկա՝ նույն կնքահոր սանիկների ամուսնության խնդրին վերաբերող տեղեկությունները բավականին սուղ են: Զգտանք նաեւ մեր հարցին առնչվող ժողովական որեւէ կարգադրություն կամ կանոնական որոշում, ուստի, կարծում ենք, այս խնդիրը դեռեւս քննարկման ու լուսաբանման կարիք ունի»[16]:

Նկատենք, որ թե՛ հայր Զաքարիայի, թե՛ Ա. Զանթիկյանի եզրակացությունները հոգեւոր ազգակցության վերաբերյալ չեն արտահայտում պատմական իրողությունն ամբողջապես: Այսպես՝ 2014 թ. Ս. Էջմիածնի եպիսկոպոսաց ժողովը կնքահոր եւ սանիկի, ինչպես նաեւ կնքահոր ու սանիկի հարազատների միջեւ հոգեւոր ազգակցության եւ ամուսնության

---

[15] Տ. ԶԱՔԱՐԻԱ ՎՐԴ. ԲԱՂՈՒՄՅԱՆ, *200 հարց Ս. Մկրտության մասին, Երեւան, 2016, էջ 129:*

[16] Ա. ԶԱՆԹԻԿՅԱՆ, *Ամուսնության որոշ արգելքների շուրջ, «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2020, հոկտեմբեր Ա., թիվ 19 (567), էջ 4, 5, հոկտեբեր Բ., թիվ 20 (568), էջ 3–4:*

թույլատրելիության վերաբերյալ սահմանել է. «Կնքահոր եւ սանիկի միջեւ ամուսնությունն արգելվում է: Ամուսնությունը կնքահոր եւ սանիկի հարազատների միջեւ թույլատրելի է ազգակցական 3-րդ աստիճանից»[17]*:*

Ինչպես վերը նշեցինք, եթե, ըստ հայր Զաքարիայի, 2014 թ. եպիսկոպոսաց ժողովի մեջբերյալ որոշումը չունի կանոնաիրավական ուժ եւ անպայմանորեն պետք է հաստատվի կաթողիկոսական կանոնական նոր կոնդակով[18]*, ապա թե՛ ամուսնության, թե՛ հոգեւոր ազգակցության աստիճանների, թե՛ կնքահոր ու սանիկի միջեւ ամուսնության վերաբերյալ շարունակում է ուժի մեջ մնալ ոչ թե Մկրտիչ Ա. Խրիմյանի (1892–1907 թթ.) 1899 թ. կոնդակը, այլ Գեւորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսի 1922 թ. կանոնական կոնդակը, որտեղ հստակ գրված է.* «....այսու հայրապետական կանոնական կոնդակաւս հաստատեմք եւ տամք իրաւունս կատարելոյ յետ այսորիկ զպսակս ի հինգերորդ աստիճանի արենակցութեան եւ ի չորրորդ աստիճանի խնամութեան: Իսկ վասն պսակաց հոգեւոր ազգականաց՝ կնքաւորաց եւ սանուց, վերացուցանեմք զամենայն *արգելս՝ տալով իրաւունս կատարելոյ զպսակս այդպիսեաց»*: *Նշյալ կոնդակի բովանդակությունը նույնությամբ վերահաստատել է 1932 թ. ազգային-եկեղեցական ժողովը. «....Այդ զեկուցման հիման վրայ ժողովը հաստատում է նախ հանգուցեալ կաթողիկոսի 5 կոնդակները.... բ) Ազգակցական հինգերորդ եւ խնամէական չորրորդ աստիճանի եւ հոգեւոր ազգակցութեան, կնքահօր եւ սանուհու ամուսնութեան արգելքի վերացում (թ. 645, նոյեմբեր 11, 1922).... Երկրորդ կոնդակ՝ կնքահօր եւ սանուհուն վերաբերող մասը ժողովն ընդունում է միայն ժամանակաւոր՝ մինչեւ յետագայ ազգային-եկեղեցական ժողովի նոր սահմանադրութեան հաստատութիւնը»*[19]*: Նշենք, որ այս շրջաբերականն ուղարկվել է նվիրապետական բոլոր աթոռներին եւ առաջնորդություններին: Օրինակ՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկո-*

---

[17] Տ. Արարատ քահն. Պողոսեան, *Միսամատյանի արժեքավոր հրատարակություն. «ՄԱՇՏՈՑ» (Յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս ըստ սահմանադրութեան Սուրբ Եկեղեցւոյս Հայոց, Ս. Էջմիածին, 2024, 568 էջ), «Էջմիածին», 2025, Ա., էջ 138:*

[18] *Տե՛ս* Տ. Զաքարիա վրդ. Բաղումեան, *200 հարց Ս. Մկրտության մասին, Երեւան, 2016, էջ 129:*

[19] *ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 163, թ. 5, 6–7: Հրապարակված տարբերակը տե՛ս «Շրջաբերական բոլոր թեմական առաջնորդներին եւ թեմական կենտրոնական հաստատութիւններին». «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության. Խորեն Ա. Մուրադբեկյան Կաթողիկոս Ամենայն Հայոց (հոգեւոր գործունեությունը 1901–1938 թթ.)», գիրք Բ., կազմեց Ս. Բեհբուդյանը, Երեւան, 1996, էջ 354:*

սություն ուղարկված՝ Գեւորգ արք. Զորեքչյանի ստորագրությամբ այս շրջաբերականը հրապարակվել է «Հասկ» պարբերականում, որտեղ նույնությամբ ներկայացված է 1932 թ. ազգային-եկեղեցական ժողովի՝ մեզ հետաքրքրող հարցը[20]։

Քանի որ առ այսօր կաթողիկոսական որեւէ այլ կոնդակով կամ կանոնաիրավական որոշմամբ չեղյալ չի հայտարարվել Գեւորգ Ե. Սուրենյանցի նշյալ կոնդակը, եւ ազգային-եկեղեցական ժողովի նոր սահմանադրություն չի հաստատվել, ուստի թե՛ Գեւորգ Ե. կաթողիկոսի կոնդակը եւ թե՛ այդ կոնդակի բովանդակությունը վերահաստատող 1932 թ. ազգային-եկեղեցական ժողովի որոշումը շարունակում են ունենալ կանոնաիրավական ուժ։

Այսու, ներկայացնում ենք Գեւորգ Ե. Սուրենյանցի կանոնական կոնդակը արյունակցության հինգերորդ աստիճանի դեպքում պսակ կատարելը թույլատրելու, խնամիության չորրորդ աստիճան հաստատելու, կնքահոր եւ սանիկի ամուսնությունը թույլատրելու, ինչպես նաեւ հոգեւոր ազգակցության ամեն տեսակի արգելքները վերացնելու վերաբերյալ։

---

[20] *Տե՛ս «Էջմիածին եւ Անթիլիաս», «Հասկ», 1933, թիւ 2, էջ 10։*

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Շնորհազարդ Տ. Սահակ Սրբազան Կաթուղիկոսի Տանն Կիլիկիոյ, Ամենապատիւ պատրիարքի Առաքելական Աթոռոյն Սրբոց Յակովբեանց Երուսաղէմի՝ Տ. Եղիշէ արքեպիսկոպոսի Դուրեան, Ամենապատիւ պատրիարքի Հայոց Կ. Պոլսոյ Տ. Զաւէն արքեպիսկոպոսի [Տէր-Եղիայեան], Գերաշնորհ արքեպիսկոպոսաց, Գերապատիւ եպիսկոպոսաց, առաջնորդաց եւ տեսչաց Առաքելական Սուրբ եւ Ուղղափառ Եկեղեցւոյս Հայաստանեայց եւ համայն հոգեւոր ուխտի՝ հովուաց եւ սրբազնագործ պաշտօնէից հայ հաւատացեալ հօտին Քրիստոսի ընդ ամենայն աշխարհս եւ ի պետութիւնս, ողջոյն քրիստոսաւանդ եւ սրտաբուղխ օրհնութիւն ի Հայրապետէս Հանուրց Հայոց եւ ի բազմավիշտ աթոռակալէս առաջին լուսաւորչացն մերոց՝ սրբազան առաքելոց Թադէոսի եւ Բարդուղիմէոսի եւ բազմերախտ հօրն մերոյն Սրբոյն Գրիգորի առաքելապատիւ հայրապետին եւ երկրորդ Լուսաւորչին Հայաստան աշխարհիս։

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն, աստուածային այցելութիւն եւ երկնային ողորմութիւն հանգիցէ ի վերայ ձեր ամենեցուն, ի վերայ ազգիս Հայոց եւ Հայաստան աշխարհիս։

Ի բազում ամաց հետէ խնդիրք ամուսնական չհաստատեան յամենայն տեղիս ի մերազնեայս, յատկապէս ի գաղութս մեր, օրըստօրէ բարդեցեալ դժուարանային եւ յանախակի լինէին առիթ ուծանալոյ զաւակաց մերոց Սուրբ Եկեղեցւոյս։

Ամենեցուն է յայտնի, զի էր երբեմն, յորժամ կենցաղ եւ սովորոյթ նահապետական իշխէր ի շինականս եւ ի գաղթականս մեր, եւ բազումք էին յընտանեաց նոցա, բաղկացեալք ի քսանից եւ յառաւել անդամոց, որք արենակիցք էին ի հինգերորդ եւ ի վեցերորդ աստիճանս, յորոց եւ ոչ մի որ զմտաւ իսկ ածէր, եթէ հնար ինչ իցէ ամուսնանալ ընդ իրեարս, զի երիտասարդք եւ օրիորդք, սնեալք ընդ յարկաւ միով, հայէին ի միմիանս իբրեւ զեղբարս եւ զքոյրս։ Սակայն յազդմանէ տնտեսական խնդրոց եւ ի ներգործութենէ ոգւոյ ժամանակիս հետզհետէ փոփոխեալ լինէին ընտանեկան պայմանք եւ կենցաղ, եւ թուլանային սովորոյթք նահապետականք։ Իսկ ի վերջին ամս ցաւ

ի սիրտ տեսանեմք, զի ամենայն ինչ քայքայեալ աւերեցաւ, եւ ցաւատանջ ժողովուրդն մեր վտարանդի եղեւ յամենայն կողմանս: Ընտանեկան կացութիւն եւ ամուսնական պայմանք տարագիր զաւակացս տագնապեցուցանեն եւ արկանեն զՄեզ ի մտատանջութիւն, եւ Մենք՝ Հայրապետ Հանուրց Հայոց, զհանգամանս եւ զվիճակս ժամանակիս կշռադատեալ եւ տեսեալ, զի անհնարին է գումարել զազգային-եկեղեցական ժողով՝ վասն կարգաւորելոյ նաեւ զյիշեալ խնդիրսն, որոշեցաք տալ զվճիռ ամուսնական ժամանակակից խնդրոց. սակայն նախքան զտնօրէնութիւն Մեր, հարկ անհրաժեշտ վարկաք զհնարաւորն ի կատար ածել՝ ժողովելով առ Մեզ զարձանագրեալ կարծիս, զարդիւնս խորհրդակցութեանց եւ զեզրակացութիւնս Ամենապատիւ պատրիարքաց մերոց, Կենտրոնական կրօնական ժողովոյ Հայոց Կ. Պոլսոյ, առաջնորդաց, սինօդականաց եւ եպիսկոպոսական դասու Մայր Աթոռոյս: Յամենեցունց ընկալաք եւ զեզրակացութիւնսն նոցա, որպէս ունիք տեսանել, յիշատակեցաք ի կանոնական կոնդակի Մերում ի 11 նոյեմբերի սոյն ամի ընդ համարաւ 644: Ի խորհրդակցութեանց եւ յեզրակացութեանց իրազեկ եղաք գոհութեամբ, զի ամենեքեանք համամիտ եւ համախորհուրդ լեալ՝ անհրաժեշտ համարին զնուազեցումն միով աստիճանաւ արենակցական եւ խնամական ամուսնութեանց, այն է՝ զհինգերորդ աստիճան արենակցութեան եւ զչորրորդ աստիճան խնամութեան համարել օրինական, իսկ զպսակս հոգեւոր ազգականութեան յամենայն աստիճանս նոյնպէս համարել օրինական: Եւ ըստ այսմ՝ միաձայն խնդրեն ի Մէնջ զհայրապետական Մեր զվճռահատութիւն եւ զհաստատութիւն ի դիւրութիւն ժողովրդեան Մերոյ:

Արդ, ի նկատի առեալ Մեր զկանոնս սահմանեալս յազգային-եկեղեցական ժողովս Աշտիշատի, Շահապիվանի եւ Պարտաւայ, որովք արգելեալ լինին պսակք յերրորդ աստիճանի խնամութեան եւ ի չորրորդ աստիճանի արենակցութեան, իսկ վասն ամուսնութեան հոգեւոր ազգականաց-կնքաւորաց չիք արգել ինչ ի յիշեալ կանոնս, եւ ի նկատի առեալ զլրջմիտ եւ զխոհական տեսութիւնս եւ զեզրակացութիւնս Ամենապատիւ պատրիարքաց Հայոց Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ, Կենտրոնական կրօնական ժողովոյ, [երկուց համագումարաց հոգեւորականաց][21], առաջնորդաց, սինօդականաց եւ եպիսկոպոսական դասու Մայր Աթոռոյս, ըստ համբերատար եւ ժողովրդական ոգւոյ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյս, նաեւ զայն կարեւոր հանգամանս, զի յապաւումն ամուսնա-

---

[21] *Փակագծում նշված հատվածը բուն կոնդակում բացակայում է, սակայն առկա է կոնդակների մատյանում. տե՛ս ՀԱԱ ֆ. 57, ց. 2, գ. 521, թ. 260ա:*

կան աստիճանաց չէ մասն հաւատոյ եւ դաւանութեան, այլ կանոնական սահմանումն, ուստի Մեք՝ Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոս Ամենայն Հայոց եւ Պետ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյս, ի լրումն կանոնական կոնդակի Մերոյ, ի վեր անդր յիշատակելոյ, այսու հայրապետական կանոնական կոնդակաւս հաստատեմք եւ տամք իրաւունս կատարելոյ յետ այսորիկ զպսակս ի հինգերորդ աստիճանի արենակցութեան եւ ի չորրորդ աստիճանի խնամութեան, իսկ վասն պսակաց հոգեւոր ազգականաց-կնքաւորաց եւ սանուց վերացուցանեմք զամենայն արգելս՝ տալով իրաւունս կատարելոյ զպսակս այդպիսեաց։

Ո՛ղջ լերուք, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն։

Վշտալի Գէորգ Ե.
Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց

Ի 11 նոյեմբերի 1922 ամի
Ըստ Տօմարիս ՌՅԶԲ.
Ի Հայրապետութեան Մերոյ ԺԱ. ամի
յԱրարատեան Մ. Աթոռ Ս. Էջմիածնի
Ի Վաղարշապատ
Թ. 645
ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 731, թ. 9–10, ձեռագիր, բնագիր

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ազգակցական աստիճաններ, արյունակցություն, հոգեւոր ազգակցություն, պսակ, ամուսնություն, Հայ Առաքելական Եկեղեցի, կանոնական իրավունք, կոնդակ, Գեւորգ Ե. Սուրենյանց, հոգեւոր իրավունք, եկեղեցական ժողովներ, Կանոնագիրք, կնքահայր, սանիկ, պսակի արգելք, իրավական կարգավորումներ, 1922 թ. կոնդակ, 1932 թ. ազգային-եկեղեցական ժողով:

25 Հոկտ. 1932 թ.

964/32

Հոգեւորականաց 1932 թ. Հոկտեմբեր 10-ի գրքերուն կցուած ցուցակ։ Հոգեւոր դպրոցի գրադարանի գրքերուն հոգեւորականաց գրքերուն հետ խառնուած։

1. Լուսի եւ գրգ. Գրիգորեանց Հայրապետաց — թ. 850.
2. Պարզեւք եւ գրգ. Հ. Դանիէլ — թ. 851.
3. Հարանեաց թիւն Սարգսեան — թ. 852.
4. Հանգիստ " " — թ. 853.
5. Գիրքերն եւ գրգ. Հ. Դանիէլ — թ. 854.
6. Հրամանաց թիւն Սարգսեան — թ. 855.
7. Հոգեւոր Հոգ. Դանիէլ — թ. 856.
8. Աստ Հրամանաց Գրիգոր. Խրատներ — թ. 857.
9. Եղեղեցոյ Հայ. Քրիստոս. " — թ. 858.
10. Վերնոյն թիւն Սարգսեան — թ. 859.
11. Յարութ " " — թ. 860.
12. Աղջկանց դասարանի թիւ. Գրիգ. Դանիէլ — թ. 861.
13. Գրքեր Հոգեւոր 2. թիւ Գրաբար, Հայերէն — թ. 862.
14. Թիւրքաց Հ. Աղջ. Դպրոցական Գրքեր — թ. 863.
15. Գրքեր թիւրք Գաղանագրեալ եւ Աղջ դասերու — թ. 864.
16. Հոգեւոր դպրոցի Աղջ. Գրիգոր Գրքեր — թ. 865.
17. Աղջկանց դպրոցի Հոգ. Գրիգոր եւ Աղջ. Դպրոցի — թ. 866.
18. Գրքերն թիւն Սարգսեան — թ. 867.
19. Գրքեր մանկաց Ս. Գրքեր դասերու — թ. 873.
" " " " Սարգսեան գրադարանի — թ. 870.
20. Երգեցողաց եւ Գրաբարի գրքեր — թ. 874.
" " Սարգսեան գրադարանի — թ. 871.
21. Ի. Հոգեւոր Գրաբարի գրքեր — թ. 875.
" " " Սարգսեան գրադարանի — թ. 872.

ՄԾՆ.ՑՆ ԼՍ.ՑՈՑ
ՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՑԵՎ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ
ԵՐԱՊՈՒՅՑՆ ՀՈԳԵՎՈՐ
ԽՈՐՀՈՒՐԴ

Թ 23-29

Երևան, 19 դեկտեմբերի 1923 ամի
Ս. Էջմիածին

Թ. 23- Հրատարակչ. Քրմի Վեհարանի։
Թ. 24- Հրահանգչ. տնտեսության հարց.
Թ. 25. Ս. Գայանեի թանգարանի Քրմ. Հ. Բարսեղյան։
Թ. 26. Խնամատարության Քրմ. Հ. Բարսեղյան։
Թ. 27. Հիմն. Կիսկ. ու Հաստ. Քրմ. Հ. Բարսեղյան։
Թ. 28. Ցեղեցիկի Քրմի Վեհարան։
Թ. 29. Գրադարանի տեսչ. Քրմ. Բարսեղյան։

6

Գերագույն հոգևոր ժողովը իր նիստերի 20-ի գրությամբ յայտնելով Ձեզ նիստերը 19-ին Ս.Էջմիածնում գումարուած ազգային-եկեղեցական ժողովի կողմից կատարուած կարգադրության եւ նրա անունը յայտնելով բոլոր եկեղեցիներում յիշատակելու մասին, ներկայիս աւելի մանրամասնությունները իրազեկ է դնում ձեզ ժողովի գործունեության եւ որոշումներին, առաջարկելով հաղորդել այն ձեզ ստորագրած եկեղեցական գործերին եւ հաստատությունները։

Պատմականները հաւաքուել սկսան Ս.Աթոռում նոյեմբերի 5-ին մեր դիրքերի բերդերի եւ վրայ չափով արտաքսմանից նոյեմբերի 6-ին պատարագից առաջ՝ հոգեհանգստյան կարգ կատարելց հոգելոյս Տ.Գերշոմ Ե.կաթողիկոսի գերեզմանի վրայ, որուան պատարագին էր Տ.Տրդատ եպ. շրջ մերից առաջ ընտրուած նոյեմբերի 1-ին Ս.Աթոռի եկեղեցու նշանակությամբ մարմնի եւ ազգ հանդիսաւորի եղաւ Իշման ազգանունի առաջ կատարուած հայրապետական մոմանցիներ։ Դարձեալ յետոյ նոր երդուցեալ բոլոր պատգամաւորները՝ թշնի մոտ կատարուած երդմամբ պարտք ընդունեցան գործելու։

Նոյեմբերի 7,8,9. նախապատրաստական, ոչ պաշտոնական եւ մասնակի աշխատանքներ էին կատարուում ժողովի օրակարգի եւ կանոնաւոր ընթացքի նկատմամբ, իսկ պատգամաւորները ծանոթանում էին իրար հետ, յայտնելով հնարաւոր վնասներն եւ աւերածները։ Ուրաւ ժողովները սկսուեցան նոյեմբերի 10-ին առաւօտեան ժամ 10-ին Տեղական Տ.Տրդատ Արքեպիսկոպոսի նախագահությամբ եւ վարչական եւ վեց պատգամաւորների մասնակցությամբ։ Տ.Տեղակալի հարցերն հարց եւ հոգելոյս Տ.Գերշոմ կաթողիկոսի յիշատակին „հոգեւոր ասելոց յետոյ՝ ընտրուեցաւ ատենապետություն եւ ապա մանրամասն քանանամբ պատգամաւորների թեկնածուներ առաջելու համար։ Ատենապետությունը կազմուած էր վեց հոգուց՝ որոնք ատենագրեցին Սուքիաս Սալիասեան, Տեղամ Տերգեորգեան եւ Լեւոն Գիւրջիբաշեան, քարտուղարներ՝ Սուքիաս Կոնյեան, Տարեն Աւագ-քահանայ Բէկիրեան եւ Կոստանդին Գրիգորեան։ Ատենապետի յանձնաժողովի անդամներ էին Տ.Մատթէոս արքեպիսկոպոս, Տ.Սահակ Աւագ քահանայ Սահակեան, Տ.Երուանդ Աւագ-քահանայ Նալբանդեան եւ Յովսէփ Տիգրանեան։

Պատգամաւորների յանձնաժողովները ուսումնասիրեցին յետոյ՝ նորոգուում նիստ եւ հաստատուում օրակարգի հետեւեալ հարցերը, ատենապետության թեկնածուներ ընտրելու ընդունեցան ենթարկելու կարգը։

1. Որոշումներ Ազգային Խորհրդի նախագահության նախագիծ:
2. Գերագույն Հոգևոր Խորհրդի [illegible]
   ա/-Գերագույն Հոգևոր Խորհրդի հաստատումը և գործունեության մասին
   բ/-Մ.Աղայի նիստական կարգերի մասին
   գ/-Գերագույն Հոգևոր Խորհրդի [illegible]
3. Ազգային քահանայության [illegible]
4. Ընտրություն Ազգային Ժողովի
5. Ընտրություն Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների:
6. Ոչնչացնել և գործունեություն ունեցող [illegible] Խորհրդի [illegible]:

Այս 5.հարցերի շուրջ կարդացվեցին Գերագույն Հոգևոր Խորհրդի [illegible] հանձնաժողովների զեկուցումները: Հանձնաժողովները [illegible] Գերագույն Հոգևոր Խորհրդի [illegible] Մ.Աղայի [illegible] Գերագույն Հոգևոր Խորհրդի [illegible] Ազգային [illegible] [illegible] Գերագույն Հոգևոր Խորհրդի [illegible] [illegible] [illegible]

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Նոյեմբերի 11-ին Երեւանում տեղի ունեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան ելոյթը. ինչպէս գիտենք, Հայրենիքի ընտրութիւնը կատարել թեկնածուների ընտրութիւնը՝ ինքնաբերաբար, ինչպէս նաեւ Հայրենիքի ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը՝ միայն մի անուն գրելով, ինչպէս վերջինիս ընտրութիւնը կատարել տուփերով:

Ժողովը անհրաժեշտ է համարում Գերագոյն Հոգեւոր Խորհրդի գործունէութիւնը՝ նախաձեռնութեամբ ամենայն Հայոց Կաթողիկոսի, ընդունած չլրս Հոգեւորականներից, որոնց ընտրում է Ազգային-Եկեղեցական ժողովը, եւ երկու աշխարհականներից, որոնց հրաւիրում է այդ կազմը՝ ներկայ ժողովին մասնակցել աշխարհական պատգամաւորներից հաւասար իրաւունքով, Հոգեւորականները կարող են դուրս եկել անդամներ տեղ մնացածներն ընտրում են նոր անդամ Հոգեւորականներից զարգել հաւասար իրաւունքով:

Նոյն նիստում Ազգային-Եկեղեցական ժողովը յանձնարարում է Գերագոյն Հոգեւոր Խորհրդին՝ իւր նախագահ Վեհափառ Կաթողիկոսի միջոցով միջնորդութիւն յարուցանել Խորհրդային Հայաստանի Կառավարութեան առաջ՝ թաւարարութիւն տալու Հայոց Եկեղեցու անհրաժեշտ եւ անյետաձգելի կարիքներին, այն է իրագործել Հոգեւոր դպրոցի բացումը Հայոց Եկեղեցու պաշտօնեաներ պատրաստելու համար, ուստի նեղ պարբերական ամսագրի՝ իբրեւ օրգան Ս. Էջմիածնի Բարձրագոյն Հոգեւոր Իշխանութեան, ստանձնել նիստի հաստատուն աղբիւրներ Ս. Էջմիածնի տեսարի եւ միաբանութեան պահանջներին, բացուելիք դպրոցի եւ պարբերական օրգանի ծախսերը եւ եկեղեցական պաշտամունքի գրքերի ապագայութեան համար:

Նոյեմբերի 12-ին Ազգային-Եկեղեցական ժողովի նիստը պիտի դումարուի առաւօտեան՝ կատարելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամների ընտրութիւնը: Կարգէս եղած ազգարարութեան համաձայն ժամը 11-ին հաւաքուումն են բոլոր պատգամաւորները Վեհարան եւ այնտեղից Ս. Տեղակալի գլխաւորութեամբ՝ հանդիսաւոր երթով՝ իջնում են Տաճար: Ասկուումն դռները, որպէս զի հաղորդակցութիւն չէ լինի դրսի հետ:

Պատշաճ աղմոսներից ու աղօթքներից յետոյ Ս. Տեղակալը բացուած է համարում ժողովը: Թեկնածուներով, գաղտնի քուէարկութեան հետեւանքն է, եօթանասուն ինը ձայնից (Արշակ Զորեանցը այդ քուէարկութիւնից յետոյ մնայն հաւաս եւ մնաւ Տաճար) Յիսուն եւ մէկ ձայն ստանում է Տէր Որդն Արքեպիսկոպոսը, 12 ձայն Ս. Մատթէոս Արքեպիսկոպոսը, 10 ձայն ստանում է Մնացական Արքեպիսկոպոսը, 2 ձայն Ս. Բաղրատ Արքեպիսկոպոսը, մի մի ձայն Ս.Ս. Թորգոմ, Գարեգին, Տէրոյ Արքեպիսկոպոսները: Բացի Որդն եւ Մատթէոս Արքեպիսկոպոսներից բոլորը հրաժարումն քուէարկութիւնից:

Կէս ժամ ընդմիջումից յետոյ կատարուեցաւ երկրորդ եւ վերջնական քուէարկութիւնը. ութսուն ձայնից վեցսուն ձայն ստանում է Տէր Որդն Արքեպիսկոպոսը, եւ տասներեքնոր ձայն ստանում է Մատթէոս Արքեպիսկոպոսը, իսկ մէկ ձայն ստացած թեկնածու: Տէր Որդն Արքեպիսկոպոսը հայտարարուեցաւ ընտրուած՝ Կաթուղիկոս Ամենայն Հայոց: Ընտրեալ Արքեպիսկոպոսը որպէս աւագագոյն, շնորհաւորուեցաւ ընտրութիւնը, եւ բոլոր պատգամաւորները մի մի մատենում համբուրում են ընտրեալի աջը:

Նոր ընդմիջումից յետոյ կատարուում տեղացուն հոգեւոր ժողովի անդամների ընտրությունը. վեցական եւ երեք ձայն ստանում է Տ.Գարեգին արքեպիսկոպոսը, յիսուն եւ երկու ձայն ստանում է Տ.Խորէն արքեպիսկոպոսը, յիսուն ձայն ստանում է Տ.Մատթէոս արքեպիսկոպոսը, քառասուն եւ չորս ձայն ստանում է Տ.Մեսրոպ արքեպիսկոպոսը, քառասուն եւ երեք ձայն ստանում է Տ.Բագրատ արքեպիսկոպոսը: Առաջին չորսը պիտի համարուին ընտրուած, բայց որովհետեւ Տ.Տ.Մատթէոս, Մեսրոպ եւ Բագրատ արքեպիսկոպոսները հրաժարուեցան, ընտրուած համարուեցան միայն առաջին երկուսը, իսկ կրկնաքուէարկութեամբ ապա Տ.Արտակ եւ Արսէն եպիսկոպոսները, որով լրացաւ չորս անդամների թիւը:

Բոլոր պատգամաւորների միահամուռ ցանկութեամբ նորընտիր հայրապետ օծուեցաւ կատարուեց հետեւեալ օրը՝ կիրակի նոյեմբերի 13-ին: Ընդարձակ եւ ցնծագին կարգը կատարել տասնեւ երկու եպիսկոպոսների առաջն էր Տ.Մեսրոպ արքեպիսկոպոսը:

Նոյն օրը հանդիսաւոր հաշիւերայ էր բոլոր պատգամաւորների եւ հիւրերի մասնակցութեամբ: Ներկայ էր եւ նորընտիր հայրապետը, որ օրհնեց պատգամաւորութիւնները եւ հայ ժողովրդին, ցանկանալով յաջողութիւն եւ տարհրդային հայաստանի կառավարութեան:

Նոյն երեկոյեան ժողովի վերջին նիստն էր, որ զբաղուեցաւ շնորհակալական ուղերձ պատրաստելով տարհրդային հայաստանի կառավարութիւնն անուանելով եւ ուղարկեցաւ տուաւ բարեհաճ վերաբերմունքի համար:

Ժողովի վերջին երեսուն Տ.հայրապետը, կրկին օրհնելով պատգամաւորութիւնը, յայտարարեց Ազգային-Սկզբնական ժողովի փակուած:

Անդամ Դերաքոյին հոգեւոր

տարհրդի՝ [illegible]

Քարտուղար [illegible]

ԳԷՈՐԳ Ե.
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄՍ. ԷՋՄԻԱԾՆԻ
1912

9

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ

ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Քնորհեալդդ Տ. Սահակ Արքեպս. Յարութիւնեան Տէր Կիլիկիոյ, Հիմնադրեալ Եպարխիական Հոգեւոր Արքունի Յանձնաժողովս Տ. Եղիշէ Արքեպիսկոպոսի Դուրեան, Հիմնադրեալ Եպարխիական Հայոց Յ. Եղիշայ Տ. Զաւէն Քահանայի Արքեպիսկոպոսի, Գէրաշխարհի Արքեպիսկոպոսաց, Գէրասպարեզի Եպիսկոպոսաց, Հոգեւորականաց և Մեղուց Հոգեւորական Սուրբ և Ուղղափառ Եկեղեցւոյ Հայասդանեայց և հանուն Դուքանոր ազգին Հանրութեան և Արդարադատ պաշտօնեից Հայ հասարակաց հօրէն Քրիստոսի շնորհս ամենայն արքայութեան և ի կենարարութեան, ողջոյն Քրիստոսանուն և Արդարադատ Օրհնութիւն ի Հայրապետէն հանուրց Հայոց և ի թագաւորէն Արքունական Խաղաղ Հանգստեան Տէրոյ Արքունական Հոգեւոր Թագաւորաց և թագաւորազարմանաց և թագաւորաց Հօրն ամենայն Արքայի Գրիգորի Հոգեւորական Հայրապետին և երկրորդ հանուրցն Հայասդանի ազգաց.

Քնորհեմ, սէր և խաղաղութիւն, Հոգեւոր ամենայն և երկնային ողորմութիւն հանդիպեսցէ ի վերայ Ձեր ամենեցուն, ի վերայ ազգիս Հայոց և Հայաստանի աշխարհիս.

Ի սկզբան ամենայն հերետիկ ամենանգամ չեռանալն յամենայն դէպս ի մարդկանէ, յարկեալս ի գաղտուրս մարդոց, որոյ դարանամարդն և յանարգանս վերանալն ասելոյ ազգաց Մեր ի Աստուածաշունչ Հոգեւորականէ և յաստուածաբանէ, զի ոչ երբեմն, յորմէ կրնայցուս և սովորելոյ հանուրցանցն ելնել ի գիտութիւն և ի

Գեղարքունի մեր և մայրաքաղաքս Երևան գալուց հետո մայրաքաղաքում և գյուղերում ամենուրեք, որտեղ որ գտնվում էին Ի հիմերորդ և Ի վեցերորդ ասորիներ, ցրված և ոչ մի որ գնդում բավական, մի հազար թշվառ ամուսնանալու շնորհ թոթարաց, չի թարմացրել և օրհնություն չունեցել մեզանից մեկ, հայրենի Ի մեր մեջ թողել գիշերային ու գիշերային: Ասելոյ յաղագս դպրոցական թանգրոց և Ի հերոմոնաց Պետրոս ոգոյ Տաճատեանցի, հերոսներն փոքրիկ ընդունելությունն ստացան և կիրակի և թաղումներ ասելոց գործերի Հանուցանելուն: Բայց Ի վերջին ասելս, գալս Ի սիրելի տեղերն, չի ասելոյ թեզ բազմաթիվ ուստերցաց և ուսուցչաց և գալուստդդ Տիրոջդ մեր վերջապես դեռ էլ յամենայն կոչմանս: Քանդանելու կայսրությունն և ասելանելուն ստացման գրությունքդ գալուցդ գալուցդ գալուցդ ստանալ և արքունի վեր Ի դրությունքդ մեր: Ա. Ամեն Հայրապետի հանդերձ Հայոց, գիտենալանելն վերջ Հանկ Տաճատեանցի կրկնագրելով և գրելով, չի ասելոյ ամենայն մի գրոնվելոյ գնդերին – Եղիշեյանցի Տիրոջ վասն կարգադրելոյ հանգ վերջիվաղ թանգրոց, որոշելոյ գրաց, վերջին ասելանելուն Տաճատեանցի թանգրոց, ասելոյ հարցանելն գրանցանելու թեզ ամեն, հարց ամենայն մեր գալ կամ չհանդուցանելն Ի կարգ ասելոյ, Տիրոջմէջ ես ամեն վարձանելոյ կարգեր, վարդապետն Բարեկրոնացու Ասելոյ և վերջանալու թեզ. Ամենայնիվ, Գետարիսոցոյ Տերոյ, Եղիշեանցի Գրիգորիսն Տիրոջ Հայոց Գ. Եպիսկոպոս, Սիսոցոյ, Սիսոցոյ-ասելոյ և Եղեգեցոյ-ասելոյ գալս ասելոյ Սիսուրաց: Ամենայնիվ վերջին գրությունքդ և վերջանալու Ասելոյ, գրելն ասելոյ տրամանդ, Տիրոջդ ասելոյ Ի Գանձասարեան Կոչեալ ամիս Ի Ամենայնիվ այն ասելոյ վերջ հանդերձ 644:

Ի Բարեկրոնացու Ասելոյ և Վերջանալու Բարեկ

[illegible] զի ամենայնեան հանդերձ և հանդերձ-
[illegible] զոյ, ունկնդրելոյ հանդերձ զնուագելոյն
[illegible] սարքեանքս ամենակալեան և բնութեանն
ամենաշնորհ, այլ ի՝ զհիմնարար սարքեան ամենա-
կալեանն և զկարգս սարքեան բնութեանն հանդերձ
ծանել օրհնեցեալ, թէպէտ հոգեւոր ակնարկութեանն
յուսադրեալ սարքեան Հոգւոյն հանդերձ օրհնեցեալ:
Եւ զայս ասեմ Հրաշալի թագաւորդ. Ի մեզ զԿայսրութեան
[illegible] մեր զբնութիւնս և զհանգիստս
Ի գիրս սրբոյն Դաւթեան ասեալ մեզ:

Արդ՝ Ի հիւրն ասելոյ մեզ զկանոնս, առհանդերձ
ամենայն-եկեղեցեաց Տնտես Աշխարհի, Քահանայ-
[illegible] և կարգաւորաց, որոյ ապ մեզ ի՝ դալոյ տարբեր
սարքեանքն բնութեանն և Ի զարարչէ սարքեանքն ամենակալ-
[illegible], թէպէտ ամենաշնորհ հոգեւոր ակնարկութեանն
[illegible] ի տիրոջ կանոնս, և Ի հիւրն
ասելոյ զՀոգին և զիրեանս [illegible] և զիրականս
Սեմէոնայ Արքեպիսկոպոսի Հայոց Երուսաղէմ
և Յ. Կարդ. Եկեղեցոյն Յրոշակեալ Տնտեսի. Սեռաղ-
[illegible], Սինոդականաց և Եպիսկոպականաց դասուն
[illegible] Հրամանաւ. [illegible] Տնտեսութեան
[illegible] Հայոց Ս. Եկեղեցւոյ, [illegible]
հանդերձեալս, զի յաղագս ամենաշնորհ սարքեանքս
[illegible] հանդերձ և դասուն, այլ կանոնս
[illegible], [illegible] Հայրապետն
կարգաւորիչն Սեմէոն Հայոց և Եղբայր Հայոց
[illegible] Ս. Եկեղեցւոյ. Ի զրոյցս կան-
[illegible] Տոմարս. Ի զի՝ ոչ դարձ [illegible]
[illegible] Հայրապետն [illegible] Հայոց [illegible]

սորին գլուխն և հիմնական սարքերն արձակվում են և գործարար սարքերն թողնվում են. իսկ վառոդ գլուխց հոգեր ավելանում - կձգեսարքց և սուռուց վերցվում վառոդն ավելանում գլխի թողնելով գործարանի գլուխ սարքերց:

Որդի վերոգրյալ գործարանի Ս. Հովհաննես և յուրաքանչյուր օրինակաց և անձնագիր Ահմեդ:

Եվ Հոյտմեթի 1922 թվին Հրամանի Ներքին գործերի ժողովրդական Մոսարի 12 37 թ

Հաստատվում Ահմեդ գործարանի և գործարանի Ս. Հովհաննես Ս. Հովհաննեսի

Հանձնարարություն

Հանձնարարություն

թ. 645

РЕЗЮМЕ

В данной статье анализируется каноническое послание (кондак) Католикоса Всех Армян Георга V Суренянца (1911–1930 гг.) относительно допустимых степеней родства между брачующимися в Армянской Апостольской Церкви. Автор исследует историко-правовой контекст, в котором Армянская Церковь, выполняя законодательные функции в отсутствии государственной власти, устанавливала правила, касающиеся брака и родства. Особое внимание уделяется различиям между кровным, духовным, усыновлённым и свояческим родством, а также анализируются постановления и мнения армянских канонистов XIX–XX вв., таких как В. Бастамянц, Н. Мелик-Тангян и др. Публикуется полный текст канонического кондака 1922 г., которым разрешается брак до пятой степени кровного и четвёртой степени свояческого родства, а также снимаются все ограничения, касающиеся духовного родства между крёстными и крестниками. Подчёркивается, что данное постановление, утверждённое также Всеармянским национально-церковным собранием 1932 г., сохраняет свою юридическую силу до настоящего времени. Работа имеет значимость как для правовой практики Армянской Церкви, так и для истории её канонического права.

SUMMARY

This article examines the encyclical issued by Gevorg V Surenyants, Catholicos of All Armenians (1911–1930) regarding permissible degrees of kinship between spouses within the Armenian Apostolic Church. The author examines the historical and legal context in which the Armenian Church, performing legislative functions in the absence of statehood, established rules concerning marriage and kinship. Particular attention is paid to the differences between consanguinity, spiritual kinship, adoption, and affinity, and the rulings and opinions of the 19th–20th century Armenian canonists such as V. Bastamyants, N. Melik-Tangyan, and others are analyzed. The full text of the encyclical of 1922 is published for the first time, which permits marriage up to the fifth degree of blood kinship and the fourth degree of affinity, and removes all restrictions on spiritual kinship between godparents and godchildren.

The article emphasizes that this resolution, which was also approved by the National Church Assembly of 1932, remains legally valid to this day. This study is of great importance both for the canonical jurisprudence of the Armenian Church and for the historical development of her legal doctrine.